

ՀԱՆԴԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ



Ա. Է. ՆՈՐՏԷՆՍՔԵՐՆԻՍ

Առաջնորդ Վ Է Կ ա յ ի նաւարկութեան ի հիւսիսային բեւեռ

Այս հռչակաւոր նաւարկութեան ընկերներէն մէկն Յ. Պովէ իտալացին է գրող հետեւեալ Տեղեկութեան: (1)

«Արջային Բեւեռն շուետացի Նաւարկութիւնն՝ անցած ամսոյն (օգոստոս) խաբիսը ձգեց յեղբօմայ (Ճարոնի), իրեն հիւսիսային երկայնութեան և հին ցամաք երկրին չորս կողմը՝ գիւտից և հետազօտութեանց ճանապարհորդութենէն դառնալով:

Ինքն՝ իրոնկոյէն մեկնելով, ի 22 յու-

(1) Հատոր 11, Պրակ Գ, էջ 279.

լիս 1878, ինկորի նեղուցէն մտաւ Քաւայի ծովը, զոր սառերէն բոլորովին ազատ դաւաւ, այնպէս որ յօգոստոս 6 հասաւ ի Տիքսոն կղզի, որ կ'իյնայ Եւնիսէյի բերնէն դէպ ի հիւսիս 60 մղոն հեռու, և իր աշխարհագրական դիրքին և ջրագրական կազմութեանը համար՝ յարմար կարեւոր նաւամատոյց մ'ըլլալու այն վաճառուց, որոնք Եւրոպայէն կ'ուղղին ի Սիպերիա, և անոնց՝ որ այս վերջի երկրէն կը ղրկուին դէպ ի քաղաքականացեալ գաւառներ:

Նուետացի զրօշին և այժմեան սկանտինաւեան Նաւարկութեան հռչակա-

ւոր Գլխոյն կը վերաբերի Մուրմանս-
քայի և Քարայի ծովուց ժածկող թանձր
քօղը վերցընելուն և մինչև հիմայ այս-
պէս աննշան մնացած ծովերը ամենա-
ճոխ բերող ճամբայ մ'ընելուն պատիւը:
Նորաւէնսքեօտի արդի ճանապարհոր-
դութեանց տալու զարգացումն 'ի հիւ-
սիսակողմանս և 'ի միջավայրս Ասիոյ՝
անչափելի պիտի ըլլայ, և ես ուրիշ բան
չեմ կրնար՝ բայց փափաղիլ տեսնելու
մեր դրօշին ծածանումն այ Նոր Ձեմ-
պլայի և Եալմալի ազազուն երկիրնե-
րուն առջև, և տանիլ մեր բերբը այն
ժողովրդոց՝ որ Մէմփրալադինքի ան-
հուն դաշտաց և Աքնիի շղթային կողից
վրայ կը բնակին:

Ուղեորութիւնը 'ի Բորդոյ Տիքսոն
ճարեց պաշար և ածուխ այն բեռնա-
բարձ նաւերէն որ մինչև հոն ընկերեր
էին իրեն, և որոնք յետոյ Ենիսէյի գետն
'ի վեր պիտի ելլէին մինչև յեաքովէ-
վա, ուր իրենց կը սպասէր ցորենի և
մետաղաց բեռ մը:

Վէկա և Լէնա, Արշաւանքը կազմող
նաւերը, 'ի 10 օգոստ. 1878, թողուցին
գլխորդոյ Տիքսոն և հարաւային յայտ-
նակ հողմով մ'ուղղեցան 'ի հիւսիս գէպ
'ի Ձէյլուքին Գլխոյն գրեթէ անձառօթ
զաւառները: Նշանաւոր են այն փոփո-
խութիւններն որ Ասիոյ վերջին ծայ-
րը ներկայացընող աշխարհացոյցներուն
պիտի ըլլուէին, որուն ափանց երկայ-
նութեամբը մինչև հիմա չիշխուած և
գրեթէ երկայն շղթայի մը պէս ցամա-
քէն տասնուհինգ մղոն հեռու դրուած
կղզիներ կան:

Մէքը և ծանծաղուաք այն բարձր
երկրներուն երկայնութեամբը կը
ժածկէին մեզմէ ջրոյն ծեծած տեղը,
և յ12^ն աւելցան սառի ստուարակար-
կատ կտորներ, որ հիւսիսային հողմէն
քշուելով, կ'երթային ծանր ծանր գէպ
յարեմտեան հարաւ:

Այն սառին եղբրքէն դնացիներ բոլոր
յ12 և 13^ն մաս մը գէպ 'ի հիւսիս անցը
մը գտնելու համար. գտնուեցաւ անց-
քը. բայց թանձրախիտ միջին համար
խոհեմութիւն չհամարելով սառի զան-

գուածոց բաւոյն և Դայմիրի կղզոյն
հիւսիսակողմէն եղած ծանծաղուաքի մէջ
դիմադրաւել, դնացիներ վերոյիշեալ կղ-
զոյն արեւմտեան կողիցը վրայ ընդ-
արձակ ծոցի մը մէջ խարխալ ձգելու:
Այս նաւակային մէջ չորս օր մնացիք:

Սակայն ժամանակը բոլորովին չկոր-
սուեցաւ. վասն զի ծովէն և ցամաքէն
զանազան ուղեորութիւններ միջոց ու-
նեցան մտադրութեամբ քննելու այս
երկրին անասուններն և բոյսերը, և
մասնաւորապէս ջրագրութիւնը, որոնք
խնդրող մէջէն կարեւորագոյններէն են,
անոնց համար որ կ'առաջարկեն վաճա-
ռականութեան և դիտութեան յառա-
ջադիմութեան նոր ճամբաներ բանա-
լու:

Օգոստոս 18 անակնկալ պայծա-
ռագեղ օր մ'եղաւ. ցամաք երկրի վրայ
եղող արշաւանքներն ետ կանչուեցան,
շոգ նաւուց մեքենան վառուեցաւ, և
10^ն յառաջ քան զմիջօրէ, թողուցինք
Ադիինայի ծոցը, որուն հարաւային ա-
փանցը վրայ, 'ի յիշատակ մեր այցելու-
թեան, բարձրացուցինք չքեղ գայլոն
մը:

Դայմիրի մեծ ջրօցին մէջէն արագըն-
թաց ճամբորդութիւն մ'ըրինք, և այն-
պէս յաջող որ 19^ն 'ի ժամ 4 յետ մի-
ջօրէի, Ասիոյ ամենէն աւելի հիւսիսային
ծայրը և մինև ցարդ անյաղթելի հա-
մարուած Ձէյլուքին Գլուխը պատե-
ցինք:

Սառի պզտի կտոր մ'ալ աչքերնուս
չկաւ, և ամենամաքուր օդոյ մէջէն
ուրիշ բան չէր տեսնուեր գէպ 'ի հիւսի-
սային կողմը՝ բայց ազատ անարգել
ջրոյ հեազհետէ յաջորդութիւն մը, ա-
ռանց ցամաք երկրի փոքր նշանի մը:
Յետ միջօրէի 5^ն, լայնահիստ ծոցի մը
մէջ մտանք, որ կը բացուի վերոյիշեալ
Գլխոյն գէպ յարեմտակողմէն, և խա-
րիսխը ձգելու ժամանակ՝ բարձրացու-
ցինք պզտի հանգիստադրօշներն և բաղ-
դաւոր անցքը ողջունեցինք թնդանօ-
թի հինգ հարուածներով:

Ի զուր Ձէյլուքին քայայանդուգն
տեղակային անցից հետքը փնտրուե-

ցինք, որ Լէնայէն ելլելով համարձակեցաւ շուներով և տկար բախիրններով այսպիսի աշխարհագրական լայնութեան վրայ յառաջ գալ և հասնիլ 'ի Սիպերիա' ենէիսէլի բերաններով:

Միայն 24 ժամ Զէյլուպինի ծոցին վրայ կեցանք, յորում երկրորդեցինք աստղաբաշխական դիտողութիւններն, վիճաբանութեան տակ ինկած այս զրնտին մասը ճիշդ սահմանելու վիսհաւնաւ:

Խաբիսի վերուցինք 'ի 20^{ին} կէսօրը, և մինչդեռ մենք դէպ յարեւել կ'ուղղուէինք, Լէնան արագաճեալ ընթացքով մ'ի հիւսիս զրկուեցաւ, և զատ ջրոյն ընդարձակութիւնն աղէկ իմանալու համար, և ստուգելու թէ ծովուն հանգիւպած խորութիւնը արդեօք ջրանցքէ մ'առաջ կու գայ' թէ խորին ջրաշեղջի մը սկիզբ է: Նոյն ատեն վէկան չափեց ծովուն խորութիւնը, և պրպտեց յատակը ծովային կենդանեաց օրինակներու համար. և երբոր դարձաւ Լէնա « երկիր մ'ալ չի տեսնուիր. ծով բոլորովին անարգել » նշանով, մենք սկըսանք ջուրը կտրել բոլոր մեքենային ու ժողն և լի առագաստիք, դեղեցկափայլ օղէն և սառի սովորական զանգուածներն՝ ափուճքէն հեռու գտնուելու բարեբաղդութենէն օգուտ քաղելու համար:

Յանկարծակի հոլմայ փոփոխութիւն մը 22^{ին} առաւօտը, ընդարձակ սառնակոյտերու տարաւ զմեզ: Միինչև ուր որ կրնար հասնիլ աչաց տեսութիւնը, բիւրեղեայ հաճգին դաշտերով ծովը զրաւեալ էր, որոնք թէ 'ի հողմոց թէ 'ի հոսանաց շարժեալ, կը զարնուէին իրարու դարհուրելի շառայմամբ և այնպիսի զօրութեամբ՝ որուն շատ դժուարութեամբ կրնար մեր գոյցնաւը դիմանալ: Դիմեցինք այն լուգական կտորներուն մէջ մտնոյա 22 և 23 օրերուն, ուղղեցանք դէպ'ի հիւսիս՝ գետաբերան մը փնտրուելու, զոր չգտնելով՝ դարձանք յարևմուտս կոյս, ցամաք երկիր հասնելու և սպասելու ափուճքը նմանօրինակ օգտամատոյց պարագայի: Մեր մեծ զարմանք

ըովը՝ տասուերկու ժամ ցամաքի վրայ նաւարկեցինք, զոր 24^{ին} առաւօտը դիտեցինք գրեթէ երեք աստիճան աւելի դէպ յարևմուտս անկէ ինչ որ հիմայ ուս աշխարհացուցից վրայ նշանուած է: Կը ներկայացընէր այս երկիրը ցած և քիչ ալեձև բլրոց միակերպ յաջորդութիւն մը, որոնք դէպ յարևմուտս լեռանց շղթայի մը հետ կը միանային, որոնց մէջ սառնարաններ և ձնանց շտեմարաններ կը տեսնուէին:

Նոյն օրուն իրիկունը Բրէօպարէնի կղզւոյն դիմաց խաբիսի ձգեցինք, որ ֆաղանկայի լայնածաւալ ծոցոյն ճիշդ մէջ տեղը ժայռ մ'է: Սպիտակ արջուց գունդ մը կզգին զրաւած էր, որոնք ետևէ էին մաքրելու լեռներու վրայէն միլիոնաւոր ծովային թռչնոց ձգած հաւկիթները իրենց թխսելու ժամանակ:

Յօգոստոս 27 գտնուեցանք Լէնայի բերանոց առջև, ուր մեր ճանապարհորդութեան ընկերը՝ թողուց զմեզ մտնելու այն լայն գետը՝ որուն անունը կը կրէ:

Լէնա գետը կը ծածկէ գրեթէ 800,000 քառակուսի մշն ջրաշեղջ մը, և կը վազեն իր մէջ այնպիսի գետեր՝ յորս նաւ մ'ընթանալով կրնայ Սիպերիոյ խորերը մտնել: Այս գետերն բազմաբեղուն դաշտերէ կ'անցնին, կը մշտնեն լեռանց մէջ՝ որ մետաղական դան ձեր կը ծածկեն, կ'ընթանան սոճեաց անեղր անտառաց մէջէն, և հասնելով յեաքուդաք, բեռնային մեծագոյն ցըրտութեան աստիճանաց տեղերէն մէկն, կը ժողովն իրենց ջրերը լայնատարր Լէնայի մէջ, և կը մտնեն այն արջային ընդարձակ անապատներուն մէջ, որոնք դռնադռն անուամբ ճանչցուած են, և խեղճ քարաքոսներով ծածկեալ ցած և միակերպ բլրոց յաջորդութեամբ մը ձևացած են, և իրենց մակերևոյթից տակը հարիւրաւոր մեզք սառած է:

Քիչ մը դժուարութեամբ մտաւ Լէնա գետին մէջ, և չգտնելով զխաղաղ 'ի գետաբերանին, որ պիտի ղեկավարէր զինքն յեաքուդաք, մտաւ համարձակ հոսանաց մէջ, և 15 օր վտանգալից

նաւարկութենէ ետքը՝ խարխաւ ձգեց հիւսիսային Սիպերիոյ մայրաքաղաքին դիմաց :

Մինչդեռ լեւա մեծ յաջողութեամբ գետին նաւարկութիւնը կը լմնցնէր, Վէկա ոչ ինչ նուազ բաղդով, կ'ընթա- նար արևելից ճամբան : Արագապէս անցանք կարգաւ Սէմիանոսքի և Սդոլ- պովոյի կղզեաց առջևէն, և յ30 օգոստ. լիաքոյի կղզոյն դիմաց, որ Նոր Սիպե- րիոյ Արշիպեղազոսին ամենէն հարա- ւայինն է, և հոչակաւոր բնական պատ- մութեան ասպարիզին մէջ իբրև նիստ Վաւմուռքի, բեւեալային ռնգեղջեր և ու- րիշ կենդանեաց նշխարաց ամենամեծ քանակութեան մը, որ այսօր սիպերիա- կան երկրէն աներևոյթ եղած են :

Ի զուր ջանացինք կղզոյն մօտենալ, որ չըլնափակեալ էր սառեւրու և ծան, ծաղուտներու զօտուով մը, որոնց մէջ անկարելի եղաւ դիմադրաւել պալէնա որսալու կամուրիշ թիաւոր նաւակով մը :

Նեղուցն, որ կայ ընդ մէջ լիաքոնի կղզոյն և Չլիադորի Գլխոյն, դեռ սա- ուի հոծ և խիտ կտորներով բռնուած էր, որոնց եղերքը քալցինը ամբողջ 30 (օգոստոս). բարեբաղդաբար իրի- կուան դէմ արևելեան հողմ ելաւ, որ սառի դաշտերը բաժնեց, չարժեց, ու- րով կրցանք անոնց մէջէն ճամբայ մը բանալ : Մեծ ուրախութիւն զգացինք՝ երբոր գտանք զմեզ յետ միջօրէի եր- կուքին յ30 ամսոյն Սաբբօ կամ Չլիա- դորի անուանի Գլխէն անդին, որուն դէմայնչափ խիզախ ռուս աշխարհա- դիտողաց զօրութիւնը խորտակեցաւ, և մասնաւորապէս աներկիւղ Պուլտա- քովիայինը, որուն ողիսականը վերջին աւատոր-հունդարական խուզարկուաց ողիսականէն ոչ ինչ նուազ արժանի յի- շատակաց է :

Ի սեպտեմբեր 3 հասանք Արշուց կղզեաց մէջ, որոնք ֆոյլմա գետոյն բերանը կ'իյնան : Հօս սկսան նաւար- կութեան հանդիպած մեծամեծ ար- գեղն իրեն ճանապարհորդութեանը մէջ :

Այս ծովուց մէջ մեզմէ առաջ եկող ուղեորութեանց աւանդածներէն և մեր դիտողութիւններէն կը կարծուի՝ որ սիպերիական ափանց այն միջոցը, որ կայ ընդ մէջ ֆոյլմայի և Պէհրինկայ նեղուցին, դժուարաւ կը մերկանայ, և այն առանձին միայն տարիներ սառ- նեղէն ահագին զօտէն, որ կը ծածկէ այն ամայաբնակ Ովկիանոսն հարիւրաւոր հազարաւոր քառակուսի մղոննե- րով :

Գլուխ Մեծ Պարանոֆ, Ախան կղզիք, Շքեղուզկի Գլուխ, Եադան Գլուխ, հրուանդանք Գոքի, Վանքարեմայի և Օմանայ շատ աւելի տալոսկալի եղան քան զբարձրաբերձ գլուխս Եայմիրի և Չէյլուքինի, և առաջին հրուանդանաց առջևն էր որ Վէկա փակուելու և սառի ահագին կոյտերէ ջախջախելու վտանգի մէջ ինկաւ, սառեւրու՝ որոնք հոսանաց և հողմոյն մատնուած՝ սոսկալի կեր- պով կը շառալէին 'ի բացի և կը խոր- տակէին ծայրասուր ժայռից դէմ, յու- րոց ընդհանրապէս վերոյիշեալ գլուխ- ները ձևացած են :

Այս տեղերս սառն ալ իրեն կազմու- թիւնը փոխեր էր. հողախառն և ապա- կեգոյն բարձր ձուլմոքներով ձևացած փիք (peak) մ'էր, որ իրենց տխրե- րանգ երևոյթ մը կու տար և երկայն դարերու հնութիւն մը : Ընդունայն տեղը կրնայինք ճանկ ձգել այն հսկա- յաձև զանգուածոց, և, ոչ սառ կտորոց սրոց և ոչ նաւի միջի եղած դօրքիւններն կրնային կերպով մ'անոնց վրայ իրենց զօրութիւնը աղդել :

Հիւսիսային Սիպերիոյ առաջին բը- նակչաց հանդիպեցանք՝ ապառաժուտ Շքեղուզկի Գլխէն դուրս : Իրենք Չի- ուրքիւններն էին, ժողովուրդ երբեմն պա- տերապմոլ, այլ հիմայ աշխատութիւն- ներէ և նեղութիւններէ և դժուարու- թիւններէ ընկճեալ, որոնց պէտք է յաղթեն կերակուր և կրակ ճարելու համար : Այս ազգը Սիպերիոյ վերջին ծայրը կը բնակի, ֆոյլմայէն մինչև Պէհրինկայ նեղուցը և Սառուցեալ ծո- վէն մինչև ցլնատիր, և մինչդեռ ա-

նոնց մէկ կէսը բնակութիւն հաստա-
տած է ծովափունքը, միւս կէսը թա-
փառաշրջիկ է և հովիւ եղջերուաց:

Այս ժողովրդեան մէջ կեցաւ Վէկա
ձմերեւու 'ի 28 սեպտեմբերի: Այն
տեղն ուր նաւարկութիւնը սառերէն
բռնուեցաւ: Պէհրինկայ նեղուցէն մի-
այն 120 մղոն հեռու էր և հաւանակա-
նաբար նաւարկելի ծովով մը հինգ կամ
վեց ժամ ճամբայ մը կ'երևար, ինչպէս
էր Զերզէ-Քամէն Գլխէն անդին եղած
ծովը, այս գլուխը մեր ձմեռնային կա-
յարանէն երեսուն մղոն հեռու էր:

Նոր սառը այնպէս արագապէս ձևա-
ցաւ, որ հոկտեմբերի 28^ն, իբրև բնա-
կան կամուրջ, կրցանք զայն ցամաք ի-
ջնելու ծառայեցընել և բախիրներ զըր-
կել 'ի հետագոտել: Թէպէտ և ծովը
բոլորովին բռնուած էր, սակայն Պէհ-
րինկայ նեղուցին նոյն տարւոյն մէջ հաս-
նելու յոյսն շուտով չթողուցինք: Եր-
սերնիս դրած էինք աշնանային հողմոց
վրայ: արևելեան կողմէն մրրիկներն
եկան, տեղ տեղ սառերը խորտակե-
ցին, այլ զՎէկան փակող միջոցը ան-
շարժ մնաց: Երբոր դադրեցան օդային
փոփոխութիւններն, զմեզ բոլորովին
փակուած համարեցանք, անոր հա-
մար ձմեռուան պատրաստութիւնները
տեսանք: Վար իյուցինք փոքր կայ-
մերն, մեծ կայմերն և առագաստները
պահելով որ և իցէ պատահական դի-
պուածի: 'ի խելաց նաւուն մինչև
ցլուխն տարածեցինք հաստ վարա-
դոյրներ. վերի յարկերը ծածկեցինք
կարգ մը բարձր ձիւնով, և սառնեղէն
որմով մը պատեցինք նաւը, որպէս զի
դիւրաւ ջերմութիւնը չկորսնցընէ:

Մի և նոյն ժամանակ՝ ուսումնական
գործիքները պատրաստուեցան, և դի-
տարանները բարձրացան, սառի մէջ
ծովափան վրայ (որ հողմոյն հակառակ
կողմն էր) որուն կապուեցաւ նաւը եր-
կայն և դիւրագնալի ճամբով մը, զոր
սառին մէջ բացինք և բաժնեցինք զայն
սառնեղէն բարձր սիւներով, որոնք ի-
րարու հետ պարանով մը կապուած
էին, որ գիշեր ժամանակ ցամաք երթա-

լու ստեննիս պիտի ծառայեցընէինք
ապահովութեան չուանի:

Թէպէտ և ջերմաչափը չիլաւ բայց
եթէ — 48 հարիւր աստիճանի, և քիչ
անգամ վար մնաց — 48°, սակայն մեր
ձմերանոցին բարեխառնութեան եղա-
նակն՝ մինչև հիմա բեռնային նաւար-
կութեանց կրածներէն խիստերէն մէկն
եղաւ: Եւ ասոր պատճառն էր հիւսի-
սային արևմտեան անդադար և ամե-
նասաստիկ հով մը, որ մեր կայարանը
կը հասնէր հազարաւոր մղոն սառու-
ցեալ ծովեր անցնելով և գրեթէ միշտ
բքով խառնուած: Միայն երկու կամ
երեք առթի մէջ՝ քամիները, որ տե-
ցին ձմերանոցի տեղւոյն մէջ, փոթոր-
կի երևոյթ առին. և այս դիպուա-
ծիս մէջ ալ այն ուժգնութեան չհա-
սան ինչպէս որ յաճախ կը պատա-
հինք մեր Միջերկրականին մէջ: Այս
կը հաստատէ այն տեսութիւնը՝ թէ
բեռնային զաւառները խաղաղութեան
կեդրոն են և ոչ եթէ օդային մեծ
խառնակութեան:

Չմեռուան ժամանակ թէ սառին և թէ
ցամաքին վրայ ուղեորութիւնք եղան,
բայց անոնցմէ և ոչ մէկն կարգաւորեալ
աշխարհագրատողութեան կերպարանք
առաւ: Այս վախերնէս եղաւ, որ չը-
լայ թէ զմեզ պատած սառնային բո-
լորակը հողմերէն խորտակելով՝ նաւը
հեռու տանի. և մանաւանդ այսպիսի չա-
րեաց մը նախահոգակ ըլլալով՝ մեր բը-
նակութիւն հաստատելուն առաջի ա-
միսներէն 'ի վեր՝ հինգ ամսուան հա-
մար նաւէն դուրս հանած էինք պա-
շար, բախիրներ և վրաններ, թափուր
շմալու՝ եթէ յանկարծ նաւը ջախջա-
խելու ըլլար, կամ սառին ճնշումէն այն-
պէս փաստէր՝ մինչև հարկ ըլլար թո-
ղու զայն: Մակայն սառը 1879 յուլիսի
վերջի օրերը սկսաւ շարժման նշան
տալ: Մեր ազատութիւնը նոյն ամսոյն
18^ն կատարուեցաւ՝ հարաւային արև-
մտեան ուժգին հողմ մը փչելով, որ սա-
ռը բացաւ, բաժնեց ծովափնէն և հե-
ռուն տարաւ: Մենք թողուցինք որ
կարգաւ անցնի բոլոր բիւրեղային ահա-

զին զանգուածը, յետոյ ամենայն զօրութեամբ ուղղեցանք դէպ 'ի ներուցն Պէհրինկայ, զոր անցանք 'ի 20 յուլիսի: Մեր նպատակին հասած էինք. հիւսիսային արևելեան բաղդաւոր գիւտը ողջունեցաւ թնդանօթի հինգ հարուած, ներով և մեծ հանդիսադրօյներով: Անցնելով Պէհրինկայ նեղուցը, Նաւարկութեան աշխարհագրական նպատակը լմեցաւ. բայց սառուցեալ ծովուն ըրած ուսումնական դիտողութիւն, նիստադադական Ովկիանոսի զննողութեանց հետ լաւ կերպով կապելու համար, թէ ասիական և թէ ամերիկեան ծովափանց այլ և այլ տեղեաց այցելութիւն ըրինք, և 'ի վերջոյ ամենակարելի կողմէն Պէհրինկայ, յորում օգոստոսի 14էն մինչև 15 կեցանք:

Թողլով Պէհրինկայ նեղուցը, առաջատու բացինք երթալու դէպ յերօմայ, ուր, ինչպէս որ ըսի, հասանք անցած ամսոյն 3ին:

Վէկա նաւը՝ որ այս ահաւոր հիւսիսային սառնապատ ծովը կտրեց անցաւ, իր կազմութեանը մէջ խիստ նոր և արտաքոյ կարգի բան մը չունի. նման է ուրիշ որ և է առագաստաւոր երկար ճանապարհորդութիւն ընող նաւու, որուն վրայ դրուած ըլլայ օժանդակ մեքենայ մը 60 ձիոյ զօրութեամբ: Քառասուն մեդր երկայնութիւն ունի, ինն լայնութիւն, և վեց՝ խորութիւն: Երեք երկայն կայմ ունի և զուխը խը-

թանի ձևով չինուած՝ սառն աղէկ կրտրելու համար: Ողնափայտին կողից չորս կողմը թաղիքով մը պատած է, որուն մէջ կայ փայտեբու կարգեր և անոնց մէջ դատարկ միջոց մը, յորում շոգիէն առաջ եկած ջերմիկ օդը կ'ընթանայ: Ամենայն կարելի միջոցաւ թափափուցեալ սպայից սենեակները՝ փոխառակ կողմնակի չինուելու, բոլորակաձև են՝ մեքենային կաթսային կաթնած, այնպէս որ ասոր ջերմութիւնը՝ կը ծառայէ նաև սենեկաց: Նաւուն գլուխը նաւաստեաց սենեակը կայ և 'ի խելն՝ սպայից և ուսումնականաց համար սըրահ մը. թէ սրահը թէ սենեակը՝ ձուլածոյ հինգ ստուար կրակարան ունին, որոնք հանքային ածխով կամ ուրիշ այլ բեյեօք վառուելով, բոլոր շրջապատ օդը սաստկապէս կը տաքցընէ:

Նաւուն մէջ երեսուն հոգի էին, այսինքն՝ չորս անդամք ուսումնական Նաւարկութեան, Նորտէնսքեօլտ, Սոլթս, պէրկ երկրախօս, Ռ. ֆիէլման տնկաբան և Նորտկուխօք մետէորաբան, թէպէտ և սպայ՝ ռուս պահապան զինուորաց մէջ: Հինգ սպայք՝ կազմողք աւագաժողով սպայակոյտն, այսինքն է՝ հրամանատարն Բալանտեր, տեղակալն Պրուս, վիշ, Պովէ, Հովկարտ և Ալեքսիսի քօնչկ. մնացածները՝ նաւաստի, տնտես, մատակարար, խոհարար և մեքենագործ: Բաց անհրաժեշտ առարկա երկուստարգը:

Ամենէն մեծ շոգեմաշն. — Անդրատլանտիկեան ինմանի ծանօթ ընկերութեան ծախքով՝ չինուելու վրայ է 'ի Պարօ ամենէն մեծագոյն շոգեմաշն, 'ի բայց առեալ զիւրէյո իւտերն, որ պիտի կտրէ զծովն, Հաւիւմ ֆաղաք անուանով: — Իրեն այլ և այլ մեծութեան չափերն են.

Երկայնութիւն . . . մեդր 180,00
Լայնութիւն . . . » 15,85
Բարձրութիւն . . . » 11,80
Տեղափոխութիւն. տակաւաջափ 8,300

Այս հսկայն 1884ին սկիզբները պատրաստ պիտի ըլլայ:

Իրեն մեքենան, բաղադրեալ գրութեամբ, 8500 ձիու զօրութիւն պիտի ունենայ, 6 զլանաց ձեռքով, երեք վերին և երեք վարին ճնշման, 8 կաթսայով՝ իւրաքանչիւրը վեց փուռով: — Կը յուսան որ 18 միլիոն արագութիւն մը կարենան ունենալ. և եթէ յանկարծ մեքենան դիպուածով վնասուի, իր առագաստներուն մակերևոյթը, չորս կայմից վրայ տարածուած, պիտի քաւցընէ զայն նոյնպէս լաւ կերպով: — Պիտի տանի 300 առաջին դասու ճաւապարհորդ: